



PEARLS OF ARMENIAN HERITAGE

Թէոդորոս Քոթենաւոր (Եօթներորդ դար)

Եօթներորդ դարու անուանի ուսուցչապետներէն է Թէոդորոս, մականուանուած Քոթենաւոր իր խստակեաց եւ ճգնողական կեանքին համար: Ոմանց համաձայն Թէոդորոս Կոմիտաս Կաթողիկոսին եղբորորդին կ'ըլլայ:

Ծննդեան եւ մահուան թուականները ծանօթ չեն. կ'ենթադրուի որ մեռած ըլլայ 7րդ դարուն վերջերը: Արագածի ստորոտը գտնուող Սբ. Աստուածածին անունով ծանօթ վանքերէն միոյն վանահայրն է եղած, եւ իր աշակերտներէն կը համարուին Սահակ Ձորոփորեցի եւ Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսները:

Իր անունով հասած են մեզի երեք ճառեր, կրօնական եւ վարդապետական պարունակութեամբ, որոնք հրատարակուած են 1833-ին (Վենետիկ, Սբ. Ղազար) Յովհան Օձնեցի Հայրապետին ճառերուն հետ: Առաջին ճառը կը կրէ “Ընդդէմ Մայրագոմեցիին” տիտղոսը, եւ Քրիստոսի մասին երեւութական կոչուած մոլոր ըմբռնումներուն դէմ կը հակաճառէ, որոնք կը սորվեցնէին որ Յիսուսի մարդկային տկարութիւն համարուած քաղցն ու ծարաւը, յոգնութիւնն ու տառապանքը, եւ մարդկային բնութեան այլ յատուկ գործողութիւնները երեւութական էին, քանի որ անպատշաճ եւ անյարիր՝ Անոր աստուածային բնութեան:

Երկրորդ ճառը ներբողեան մըն է Սբ. Իսաչին՝ գեղեցիկ իմաստներով եւ այլազան փոխաբերութիւններով: Այս ճառը ներշնչած է Իսաչի շարականներուն մէկ մասը: Երրորդ ճառը բանաստեղծական զեղուն դրուատիք մըն է նուիրուած է Սբ. Կոյսին, եւ նմանութիւններ ունի մէկ քանի շարականներու:

Քոթենաւոր ցոյց կու տայ արուեստագէտի եզական խառնուածք. զգայուն է եւ կը սիրէ վառ եւ ուժեղ գոյներով արտայայտուիլ: Բայց կը դիմէ մութ եւ թանձր շեշտերով հնչեղ պատկերներու եւ նմանութիւններու, որպէսզի կարենայ իր զգացումներն ու տեսութիւնները արտայայտել իրենց ամբողջական սաստկութեամբ:

Ան կը կարծէ հասնիլ իր այս նպատակին՝ ուժեղ մակդիրներ, բառերու անօրինակ բարդութիւններ, եւ գերադրական մասնիկներ գործածելով: Լեզուն յունաբան է եւ հետեւաբար՝ խժաճայն. կորսնցուցած է հայերէնին բնիկ վեհութիւնն ու ներդաշնակ ընթացքը: Նախադասութիւնները երկար են, թոյլ եւ անհամաչափ կուտակումներով ծանր:

Գուցէ Եօթներորդ դարուն Հայաստանը վերիվայրող քաղաքական, մշակութային եւ դաւանաբանական խնդիրներուն հարագատ արտայայտութիւնն է այս լեզուն:

(Քաղուած Հ. Կիրեղ Վրդ. Քիպարեանի “Պատմութիւն Հայ Գրականութեան” հատորէն)

